



Ծնվել է 1929թ Ճամբարակում: Ճակատագրի բերումով հինգ տարեկանից քրոջ և եղբոր հետ հայտնվել է Գավառի մանկատանը: 1940թ եղբոր հետ տեղափոխվել է Երևան: Յոթնամյա կրթություն ստանալուց հետո սկսել է աշխատել: 1947թ ընդունվել է Երևանի բժշկական տեխնիկում: Ուսմանը զուգահեռ աշխատել է , այնուհետև մեկնել Մոսկվա և ընդունվել Մոսկվայի ֆարմացեպտիկ ինստիտուտը: Երկու տարի անց , ուսումը կիսատ թողելով ,վերադարձել է Հայաստան խնամելու հիվանդ մորը: Մոր մահից հետո 1955թ ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտ: Ուսման տարիներին զուգահեռ աշխատել է հոգեբուժական հիվանդանոցում: Ավարտելուց հետո աշխատել է Գեղաշենում: 1972թ նշնակվել է Արզնի ավանի հիվանդանոցի գլխավոր բժիշկ: Անդրանիկ Պետրոսյանը 38 տարի աշխատել Բյուրեղավանի հիվանդանոցում: 2003թ ստացել է Բյուրեղավանի պատվավոր քաղաքացու կոչում: